

ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄ ՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ



Աւետիք Իսահակեանի «Աբու-Լալա Մահարի» պոէմը:

Արտուշ Սկրտումեան

*Եւ քարաւանը Աբու-Լալայի՝
Աղբիւրի նման մեղմ կարկաչելով՝
Քայլում էր հանգիստ, նիրհած գիշերով,
Հնչուն զանգերի անոյշ դողանջով:*

*Հաւասար քայլով չափում էր ճամբան
Այն քարաւանը ոլոր ու մոլոր,
Եւ դողանջները ծորում քաղցրալուր՝
Ողորդում էին դաշտերը անդորր...*

Բանաստեղծական այս տողերը յայտնի են տարբեր սերունդներու պատկանող գրեթէ ամեն մի հայու, և ոչ միայն, այո, թող զարմանալի չթուայ, նոյնիսկ օտարներուն: Շատեր կարդացած են այս յայտնի պոէմը, շատեր նոյնիսկ յուսալքուած ատեն մխիթարութիւն փնտռած են այս քերթուածին տողերուն մէջ՝ ճիշդ հեղինակին պէս:

Աւետիք Իսահակեան գրողի մասին կարելի է ըսել, «...ուշ-ուշ կու գան անոնք, բայց ոչ ուշացած...»: Իւրաքանչիւր ազգ պէտք է հպարտանայ այդպիսի բանաստեղծ ունենալով: Իսահակեան կը պատկանի այն բանաստեղծներու դասին, որոնք հագուադէպ կը ծնին:

Երբ Աւետիք Իսահակեան իր ընթերցողին՝ «Երգեր ու վերքեր»ու, «Հայդուկի երգեր»ու և «Ալագեագի Մանիններ»ու կողքին ներկայացուց «Աբու-Լալա Մահարի» պոէմը, այն ատեն իր այս քերթուածով տաղանդաշատ բանաստեղծը փայլեցաւ նորովի, իբրեւ աշխարհի և մարդկային անարդարութեան դէմ իր գրիչով պայքարող խոհա-փիլիսոփայական բանաստեղծ: Տպագրուելէն յետոյ պոէմը մեծ արձագանգ ստացաւ հայ, ռուս և եւրոպական գրական շրջանակներէն ներս: Այնքան սիրւեցաւ, որ թարգմանուեցաւ ռուսերէն, վրացերէն, ֆրանսերէն, արաբերէն, անգլերէն, գերմանե-



Ա. Իսահակեան. նկար՝ Մ. Սարեանի

րէն և այլ լեզուներու: «Աբու-Լալա Մահարին» այնպիսի ստեղծագործութիւն է, որուն լիարժէք թարգմանութեան համար քիչ է ոչ միայն մէկ, այլ նոյնիսկ երեք և չորս փորձերը»: [Ռեալ Թուարաձէ (Ա. Իսահակեանի մասին, Երեւան, 1971թ., Ա. Իսահակեանի տուն-թանգարան, կազմեց եւ թարգմանեց Արաս Իսահակեանը, էջ 43):]

Այս պոէմով Վարպետն իր բողոքը կ'արտայայտէ համայն աշխարհի դէմ, իր և իր ազգի հանդէպ իրագործուող անարդարութիւններու համար: Ինչպէս իւրաքանչիւր մարդ, երգ, գիրք կամ պատմութիւն, այս պոէմն ալ ունի իր կենսագրութիւնը: Առհասարակ, ստեղծագործութիւն մը ընթերցողին համար շատ աւելի հետաքրքրական կ'ըլլայ, երբ յայտնի կ'ըլլան այդ քերթուածին կենսագրական մանրամասնութիւնները, գրութեան շարժառիթը, երբ և ինչպէս, կամ ինչու և ինչի համար գրուած ըլլալը:

Իբրեւ Աւետիք Իսահակեանի «Աբու-Լալա Մահարին» պոէմի գրութեան տարեթիւ կը յիշատակուի 1909 թուականը: Ինքը՝ Վարպետն ալ հաստատած է այդ տարեթիւը և պատմած է պոէմի գրութեան շարժառիթի մասին: Ըստ Վարպետի պատմածի, տիրող իշխանութիւններու և օրէնքներու դէմ բողոքը, դժգոհութիւնն իր մէջ միշտ ալ եղած են: Ի պատասխան այն հարցումին, թէ ինչո՞ւ մինչեւ հիմա կը լռէր, Իսահակեան կ'ըսէ. «...զանգատս արտայայտելու ձեւը և միջոցը կը փնտռէի...»:

«Աբու-Լալա Մահարի» պոէմի կենսագրութիւնն աւելի պատկերաւոր մեկնաբանելու համար, ժամանակ առ ժամանակ ստիպուած ենք վերադառնալ անցեալ, այսինքն՝ պէտք է բանանք Իսահակեանի անցեալի խորունկ սնտուկը և գտնենք այն թելերուն ծայրերը,

որոնցմով կապուած են իրարու Վարպետն ու իր անգուգական «Աբու-Լալա Մահարին»:

1909 թ. Մեպտեմբերն էր: Մետեխի (Թիֆլիս) բանտէն նոր էր դուրս ելած՝ գրաւի դիմաց, բայց դեռ դատի տակ էր: Ալեքսանդրէն (Գիւմրի) շոգեկառքով Երևան կ'երթար: Նահանգական ժանդարմական վարչութեան կողմէ կանչուած էր հարցաքննութեան: Քանի որ շոգեկառքի մեքենավարը գիւմրեցի ծանօթ մըն էր, չընդդիմացաւ, որպէսզի Իսահակեան մտնէ մեքենավարի խցիկը և հոնկէ հետեւի շոգեկառքի արագ ընթացքին: Հանգստի կարօտ իր աչքերով Վարպետն անթարթ կը նայէր դէպի անծայրածիր հեռուն՝ առաջ սուրացող շոգեկառքի ուղղութեամբ և կը խոկար: Վարպետն այդ վայրկեանին կ'երագէր, որպէսզի շոգեկառքը զինք տանի հեռու, հեռու՝ աշխարհէն, տիրող իշխանութենէն և օրէնքներէն, դատէն ու դատաստանէն:

Երբ շոգեկառքը կը մտնէ Սարդարապատի անապատը, կիսախաւարի մէջ, հորիզոնի վրայ տեսիլքի պէս կ'երեւայ ուղտերու քարաւան մը. «Աբու-Լալայի» պատկերը պատրաստ էր: Երբ Վարպետը կը վերադառնայ հայրենի գիւղը՝ Ղազարապատ, երեք օրուայ ընթացքին կը գրէ իր անկրկնելի և հանճարեղ ստեղծագործութիւնը՝ «Աբու-Լալա Մահարի» չքնաղ պոէմը:

Աւետիք Իսահակեանն իր մէկ այլ՝ 1936 թուականի վերյուշի մէջ, ուրիշ պատմութիւնը մը կը պատմէ այս պոէմի գրութեան մասին:

1908-1909 թթ. բանտը եղած ատենը, գիշերը կը լսէ սուրացող շոգեկառքի ձայն մը, երեւակայութեան թելերով անոր հետ կը թռչի դէպի անսահման ազատութիւն. այնքան բաղձալի և անհասանելի թուացող ֆիզիքական և հոգեկան ազատութիւն: Յետագային իր պոէմի մէջ այդ շոգեկառքը դարձած է Աբու-Լալայի յայտնի քարաւանը:

*Եւ քարաւանը Աբու-Լալայի՝
Աղբիւրի նման մեղմ կարկաչելով՝
Քայլում էր հանգիստ, նիրհած գիշերով,
Հնչուն զանգերի անոյշ դողանջով:*

*Հաւասար քայլով չափում էր ճամբան
Այն քարաւանը ոլոր ու մոլոր,
Եւ դողանջները ծորում քաղցրալուր՝
Ողողում էին դաշտերը անդորր:*

1909-ին Ախալքալաք երթալու ատեն,

հայ ազգի մէկ այլ տաղանդաշատ բանաստեղծ՝ Վահան Տէրեան, հասնելով Ալեքսանդրապոլ՝ կը հիւրընկալուի Իսահակեանին տունը: Խօսք ու գրոյցի ընթացքին Իսահակեան Տէրեանին ցոյց կու տայ նոր-նոր գրուած «Աբու-Լալա Մահարի» պոէմը: Իսահակեան սկզբնական տարբերակին մէջ գրած էր, որ Մահարի երեւակայութեամբ հեռացաւ քաղաքէն: Տէրեանի խորհուրդով Վարպետը այդ բառը կը հանէ՝ հերոսի փախուստին տալով իրական ձեւ:

*- Գնա՛, միշտ գնա՛, իմ քարաւանս,
Եւ քայլի՛ր մինչեւ օրերիս վերջը, -
Այսպէս էր խօսում իր սրտի խորքում
Աբու Մահարին, մեծ բանաստեղծը:*

1920-ական թթ. սկիզբերը Իսահակեան հետեւեալ գրառումը կ'ընէ. «Ծանօթութիւն.- Առաջին անգամ ես գրած էի այս ձեւով. *այսինքն՝ Աբու-Լալա Մահարին գնում է երեւակայական քարաւանով, տեսիլքի մէջ, սակայն երբ ընկերներին մօտ կարդացի ձեռագիրս, նրանք խորհուրդ տուին երազական քարաւանը վերածել իրականի: Բայց հիմա լուսագոյնն եմ համարում վերադառնալու իմ առաջին սեփական մտածումին, ներշնչումին*»: (Աիկ Իսահակեան, «Բարեւ, Վարպետ», Երեւան 2008, էջ 115-116):

«Աբու-Լալա Մահարի» պոէմը Վարպետի հասուն միտքի արդիւնքն է, կեանքի ամբողջական վերգնահատումը: Իբրեւ այս պոէմի գրութեան ճշգրիտ տարեթիւ, Իսահակ Իսահակեանի (բանաստեղծի եղբօրորդու) ձեռքով կատարուած ընդօրինակութեան վրայ կայ հետեւեալ յիշատակութիւնը. «Գրուած 1909 թ. 30 Օգոստոսից մինչեւ 2 Մեպտեմբերի և 1910 թ. 27 Մարտի մինչեւ 4 Ապրիլի, Ղազարապատում»: Այդ ընդօրինակութիւնը, հաստատուած է Աւետիք Իսահակեանի կողմէ՝ 1950-ական թթ. մակագրութեամբ: Վարպետը «Աբու-Լալա Մահարի» պոէմի վերջնական տարբերակը սկսած է գրել 1909թ. Օգոստոսի 30-ին և աւարտած՝ 1910թ. Ապրիլի 4-ին: Հետագայ տարիներուն հեղինակը միշտ վերանայած և խմբագրած է պոէմը՝ անընդհատ բիրտ-ղացնելով զայն: «Աբու-Լալա Մահարի» պոէմի գաղափարական տարրերը կարելի է փնտռել բանաստեղծի աւելի վաղ շրջանին գրուած՝ «Կեանքի դժոխքից մտայ անապատ» (1902 թ.), «Օտար, ամայի ճամբերի վրայ» (1903 թ.), «Իմ

ուղին» և «Ես մի նոր զանգ եմ» բանաստեղծություններում մեջ:



Իմ հոգին յաւերժ խռով է ձեզ հետ

Գրականագետ Արամ Ինճիկեան, որ տարիներ է վեր ուսումնասիրած է Աւետիք Իսահակեանի կեանքն ու գործը, հետաքրքրական փաստ մը կը յիշատակէ այդ առիթով. «Աւետիք Իսահակեանի երկերի գիտական հրատարակությունը հրատարակելիս, հետազոտողները Վարպետի արխիւում յայտնաբերել են «Իմ քարաւանը»: Պոէմը գրուած է աշակերտական տետրում, որի շապիկի վրայ գրուած է. «Աւետիք Իսահակեան, Poesie, «Իմ քարաւանը», սկսուած 1906 թ. 25 Օգոստոսին, Ղազարաւ պատ»: «Իմ քարաւանը» գրաւում է գրեթէ ամբողջ տետրը, բացառութեամբ 24-րդ էջի, որի վրայ հետագայում գրուած է «Աբու-Լալա Մահարի» պոէմի յայտնի նախերգանքը՝ «Աբու-Լալա Մահարին, հռչակատր բանաստեղծը Բաղդատի...»: Այսպիսով ընդարձակում է «Աբու-Լալա Մահարի» պոէմի ստեղծագործական պատմութիւնը՝ 1906 թ. Օգոստոսի 25-ից մինչեւ 1910 թ. Ապրիլի 4-ը»: (Արամ Ինճիկեան, Աւետիք Իսահակեան, 1977 թ, էջ 59-62):

Խօսելով պոէմի գրութեան շարժառիթի մասին, պէտք է ըսել, որ Վարպետի սիրտին մէջ տարիներով կուտակուած դժգոհութիւնները, տագնապները, յոյզերը յարմար առիթի կը սպասէին, որպէսզի հրաբուխի պէս ժայթքէին: Խռոված ու տակնուվրայ եղած սիրտը ցաւէն ու զայրոյթէն կը գալարուէր իր հարազատ ժողովուրդի խռոված հոգիին պէս: Բանաստեղծը, առաւել քան ռեւէ մէկը, իրաւունք ունէր ըմբոստանալու հին աշխարհի դէմ, 20-րդ դարասկզբին իր ժողովուրդին կը սպառնային բնաջնջել աշխարհի երեսէն: Սակայն չյաջողեցան: Թուրք մարդասպանը արմատախիլ ընելով բնօրրանէն, գրկեց տուն ու տեղէն, հայրենի արմատներէն, ամողջ ժողովուրդ մը

նետեց բախտի քմայքին: Իսկ հիմա ինքը՝ Իսահակեանը, իր ժողովուրդի երախտապարտ զաւակը, ստեղծագործական և անձնական կեանքի վերելքին՝ խուսափելով քաղաքական հետապնդումներէն, կալանաւորուելու և Սիպիր աքսորուելու իրական վտանգէն, ստիպուած էր թողուլ իր ձեռքբերումները և հեռանալ դէպի անյայտութիւն: Շատ դժուարութիւններ էր յաղթահարած Վարպետը, բայց այս մէկը մահացու կապար էր:

*Ես շատ սիրեցի իմ ընկերներին,
Եւ բոլոր մարդկանց մօտիկ ու հեռու,
Իժ դարձաւ խայթող իմ սէրը հիմա,
Թոյն-ատելութեամբ սիրտըս է եռում:*

*Բայց ամէնից շատ ատում եմ հազար
Ու մէկերորդը - կեղծիքը հոգու,
Որ զարդարում է անմեղ սրբերի
Լուսապսակով երեսը մարդու:*

*Մարդկային լեզու, դու որ երկնային
Բոյրով ու թոյրով, շղարշով պայծառ
Ծածկում ես մարդու դժոխքը հոգու,
Ոգե՞լ ես արդեօք ճշմարիտ մի բառ:*

«Աւետիք Իսահակեան գիտէ գանգատուիլ հին, հազար անգամ անիծուած աշխարհի «քար» անարդարութիւններու, շահագործման, հին աշխարհի չարութեան ու անիմաստ դաժանութիւններու դէմ: Ան գիտէ գանգատիլ և կը գանգատուի այնպէս, ինչպէս այդ կրնայ ընել անճար գեղջուկը՝ կարիքի ու ցաւի տակ կռացած աշխարհի խեղճը: Եւ թէպէտ այդ գանգատը «նայի» է ու անգոր մազաչափ անգամ շարժելու աշխարհի սիրտը, բայց այնուամենայնիւ այդ բողոքը բանաստեղծի սիրտին խորքէն կու գայ և չի կրնար խորապէս չազդել ընթերցողին...»: (Աղանի Վարդանեան, Շիրակի աննման երգիչը: Ծննդեան 60-ամեակի առթիւ, «Ապագայ», Փարիզ, 1936, 2 Փետրուար, «Հայրենիք», Բոստոն, 27 Փետրուար:)

*Ա՛խ, մնաք բարեւ չեմ ասում ես ձեզ,
Իմ հօր գերեզման, օրոցք մայրական,
Իմ հոգին յաւերժ խռով է ձեզ հետ,
Հայրենական յարկ, յուշեր մանկական:*

Սակայն մեկնելէն առաջ, Իսահակեանը փայլեց իր տաղանդի ամբողջ ուժով՝ բարձրաձայնելով համամարդկային հարցերու մասին:

Քննելով այդ հարցերը խոհա-փիլիսոփայական դիտակետեն՝ չմոռցաւ նշել հետաքրքրական գուգահեռներ և ընդհանրացումներ, որոնք իրմէ առաջ տեսած էինք միայն Գրիգոր Նարեկացիին մօտ: «Աբու-Լալա Մահարի» վերնագիրը 10-11-րդ դարերու յայտնի և տաղանդաւատ արաբ բանաստեղծ Աբու-Ալա ալ-Մահարիի անուան կրճատուած ձեւն է: Սիրիական Մահարրա քաղաքը ծնած (973-1057) ու ապրած այս բանաստեղծը չորս տարեկանին ծաղիկ հիւանդութենէ կը կորսնցնէ տեսողութիւնը, սակայն ատիկա արգելք մը չ'ըլլար որպէսզի տասնմէկ տարեկանին սկսի ստեղծագործել: Բացառիկ ընդունակութիւններու տէր արաբ բանաստեղծը գոց գիտէր «Դուրանը», ինչպէս նաեւ այլ գիրքեր: Տեսողութենէն զրկուած ըլլալով, ան իր գրածները կը մտապահէր, այնուհետեւ բարձրաձայն կ'արտասանէր մերձաւորներուն, որպէսզի գրի առնեն: Գիրքերը, զորս իրեն համար կը կարդային, գոց կը յիշէր: Բացառիկ մտային կարողութիւններու տէր ալ-Մահարին քսան տարեկանին արդէն յայտնի բանաստեղծ էր:

Բաղդադի նշանաւոր խալիֆը՝ Հարուն ալ-Ռաշիդը, եղած է ալ-Մահարիի տաղանդի երկրպագուն ու հովանաւորը, ալ-Մահարին առանց երկնչելու կը կարդար իր համարձակ բանաստեղծութիւնները Հարուն ալ-Ռաշիդին համար: Հոս ալ նմանութիւններ կան վրաց Հերակլ արքայի ու Մայեաթ-Նովայի, Ֆիրդուսիի և այդ օրերու տիրակալ Սուլթանի միջեւ: Աբու-Ալա-ալ-Մահարիի և Նարեկացիի արուեստներու միջեւ ալ ակնյայտ նմանութիւններ կան: Անոնք միմեանց չեն ճանչցած, սակայն եղած են ժամանակակիցներ: Նարեկացիի նշանաւոր «Մատենան Ողբերգութիւնը», սկիզբէն մինչեւ վերջ «Բան ի խորոց սրտի առ Աստուած» է, այսինքն՝ այն միակ բարդ ճամբան, որով մարդը Աստծուն պիտի հասնի: Նոյն նպատակով ալ գրուած է Աբու-Ալա ալ-Մահարիի հռչակաւոր «Ներում խնդրէ» կամ «Գիրք ներումի» ծաւալուն ստեղծագործութիւնը. իւրաքանչիւր *բէթ*ը (տուն) կը սկսի «ներում խնդրէ Ալլահէն» խօսքերով: Նմանութիւն կայ նաեւ արաբ բանաստեղծի և հանճարեղ Իսահակեանի ստեղծագործութեան հերոսի միջեւ: Երկուքն ալ կ'ընդլզին աշխարհին վրայ տիրող բռնակալութեան, անհաւասարութեան, կեղծիքի, ու չարութեան դէմ: Անդրադառնալով արաբ բանաստեղծի, Իսահակեանի և անոր պոէմի գլխաւոր հերոսի ընդհանուր նմանութիւն-

ներուն, Ազատ Եղիազարեան կը գրէ. «Արաբ բանաստեղծ Աբու-լ-Ալա-ալ-Մահարին պէտք է ընկալուի ոչ թէ իբրեւ մէկը, ով սոսկական ազդակ է տուել Իսահակեանի պոէմի ստեղծմանը, այլեւ իբրեւ բանաստեղծ ու մտածող, որի հայեացքները, ողջ աշխարհընկալումը ներքին խոր հարազատութիւն ունեն բանաստեղծի հոգեւոր աշխարհի հետ»: (Ա. Եղիազարեան, «XX դարի հայ գրականութիւն. դէմքեր և խնդիրներ», Երեւան, 2002, էջ 69):

Իսահակեանը դեռ տարիներ առաջ սիրահարուած էր Արեւելքին ու անոր բանաստեղծական աշխարհին, պատահականութիւն չէր հերոսի ընտրութիւնը և նմանեցումը ալ-Մահարիին: Իսահակեան լաւ կը հասկնար ալ-Մահարին և իսահակեանական լեզուով կը խօսեցնէ ալ-Մահարին: Պոէմի հիմնական հերոսը ոչ թէ արաբ բանաստեղծն է, այլ ինքը՝ Աւետիք Իսահակեանը, որ պոէմի ընթացքին կը մասնակցի Աբու-Լալա Մահարի անունով: Իսահակեան արտայայտած է իր մտածումները, իր ժողովուրդի տառապանքը, պայքարը՝ միաժամանակ պահպանելով իր սեփական եսը և անձնական մտորումները:

*Աբու-Լալա Մահարին,
Հռչակաւոր բանաստեղծը Բաղդադի,
Տասնեակ տարիներ ապրեց
Խալիֆաների հոյակապ քաղաքում,
Ապրեց փառքի եւ վայելքի մէջ,
Հօգօրների և մեծատունների հետ սեղան մստեց,
Գիտունների եւ իմաստունների հետ վեճի մտաւ,
Սիրեց եւ փորձեց ընկերներին,
Եղաւ ուրիշ-ուրիշ ազգերի հայրենիքներում,
Տեսաւ և դիտեց մարդկանց և օրէնքները:
Եւ նրա խորաթափանց ոգին ճանաչեց
մարդուն,
Ճանաչեց և խորագին ատեց մարդուն
Եւ նրա օրէնքները:*

«Աւետիք Իսահակեանը միջազգային առումով մեծ գրող է և գերազանցօրէն մարդկային, իսկ նրա «Աբու-Լալա Մահարին» անժխտելի, անգուգական գլոխգործոց: Առաջին իսկ օրից համակուեցի նրա զգացումների խորութեամբ: Անվերապահ և լիակատար հիացած եմ նրա գործով: Իսահակեանի անձը ինձ համար շողշողուն մտքի, ոգու, պայծառ լոյսի ու ջերմութեան փարոս է...»: Խայրեղին-Էլ-Ասադի («Աւետիք Իսահակեանի մասին», Երեւան 1971թ., Ա. Իսահակեանի տուն-թան-



գարան, կազմեց և թարգմանեց Աբաս Իսահակեանը, էջ 42):

*Մեղկ փափկութեան մէջ Բաղդադն էր նիրհում
Ջեննաթի շքեղ, վառ երազներով,
Գիլտատաններում բլբուլն էր երգում
Գազելներն անոյշ՝ սիրոյ արցունքով:*

*Շատրուանները քրքջում էին
Պայծառ ծիծաղով ադամանդեղէն,
Բոյր ու համբոյր էր խնկարկում չորս կողմ
Խալիֆաների քեօքից լուսեղէն:*

*Մեխակի բոյրով հովն էր շնչում
Հեքիաթներն հազար ու մի գիշերուայ,
Արման ու նոճին անոյշ քնի մէջ
Օրորում էին ճամբէքի վրայ:*

Իսահակեանի ստեղծագործութիւնները միշտ ալ համեմատւած են եղած ժողովրդական բառ ու բանով, ասանդութիւններու կախարդիչ հմայքով: Բանաստեղծը մի նոր հանճարով և ուժով զարկ տուաւ իր գրչին ու կերտեց անգուգական «Աբու-Լալա Մահարի» պոէմը:

Մարդիկ սովորաբար իրենց կեանքի ամբողջ ընթացքին կը մնան որոշակի տարիքի և շրջանի տրամադրութեան ներքոյ, իրենց ստեղծագործութիւններու վրայ ալ այդ ազդեցութիւնը կնիքի պէս կը մնայ հետագայ կեանքի ընթացքին: Աւետիք Իսահակեանի ստեղծագործութիւններուն մէջ, դեռ «Երգեր ու վերքեր»էն սկսեալ, կը նկատուէր յուսահատ տխրութիւն մը, որ կարծես կեանքէն յուսահատուած ծերուկի պէս կը շրջի Վարպետի գրեթէ բոլոր գործերուն մէջ:

*...Եւ որովհետեւ չունէր կին և երեխաներ,
Բոլոր իր հարստութիւնը բաժանեց
աղքատներին,*

*Առաւ իր ուղտերի փոքրիկ քարաւանը՝
Պաշարով ու պարէնով,*

*Եւ մի գիշեր, երբ Բաղդադը քուն էր մտել
Տիգրիսի նոճիածածկ ափերի վրայ, -
Գաղտնի հեռացաւ քաղաքից...*

«Աբու-Լալա Մահարի» պոէմը կարծես լայն կտաւի վրայ լաւագոյն ձեւով կ'արտայայտէ երկրային կեանքէն, իշխող բարքերէն, մարդոցմէ, յոգնած և դէպի առանձնութիւն ձգտող մարդու հոգեվիճակը: Աբու-Լալա Մահարիի կերպարին մէջ երկփեղկուած են և՛ Աբու-Ալա ալ-Մահարին, և՛ Աւետիք Իսահակեան: «Իսահակեանը պոէմի նիւթ է դարձրել արաբ բանաստեղծ Աբու Ալ- Մահարիի հեռանալը Բաղդադ քաղաքից: Պոէմի հերոսը նոյնն է, ինչ-որ Նիցչէի Ջրադաշտը. արաբ բանաստեղծի գործերի ու խօսքերի մէջ դրուած է այն, ինչ-որ Նիցչէն է թելադրում: <«Մի՛ գնա մարդկանց մօտ, գնա՛ անապատ՝ գազանների մօտ», - ասում է Նիցչէն:» (Յովակիմ Սօլովեան, «Քննադատական տեսութիւններ», Հատոր Ա., «Ժամանակակից Հայ Քնարերգութիւնը» Թիֆլիս, 1911թ., էջ 126-127):

Մարդկային հոգին լաւ ուսումնասիրած և հիասթափուած բանաստեղծը կը հեռանայ Բաղդադէն ու կը հանգրուանէ պղնձացած շէկ ժայռի մը տակ՝ գազաններու մօտ: Կեանքէն, տիրող իշխանութիւններէն, մարդկային նենգութիւններէն և նոյնիսկ կիներէն հիասթափուած ու յոգնած, բանաստեղծը հոգեկան անդորր կը փնտռէ միայնութեան մէջ:

Կիներու մասին խօսելու պարագային, Իսահակեան անշուշտ առաջինը պիտի յիշէր իր առաջին, անկրկնելի ու միակ իրական սիրուն՝ Շուշանիկ Մատկանեանին: Վարպետը սիրեց Շուշանիկը իր ամբողջ էութեամբ, իր սիրտի աբողջ ուժով, և ցաւ ի սիրտ, նոյն ուժով ալ հիասթափուեցաւ, բայց երբեք չկրցաւ մոռնալ զայն: Ահա Վարպետի նամակներէն հատուած մը, որ կը փաստէ 16-ամեայ պատանիի սիրոյ ոյժը. «Ես նրան սիրում եմ իդեալական սիրոյ ամենաընդարձակ ծաւալով: Նրան սիրում եմ անվերջ, յաիտեան», խոստովանութիւն մը, որ բնորոշ է 16-ամեայ սիրահարին: Սակայն մօր սպառնալիքներու ներքոյ Շուշանիկ ամուսնացաւ մէկ ուրիշի՝ մեծահարուստ անձի մը հետ, զոր երբեք չսիրեց:

Շուշանիկի ամուսնութեան լուրը լսելով, Իսահակեանի սիրտը տակնուվրայ եղաւ: «*Վիեննայում էի, երբ Գինովաքեից (բանաստեղծին քոյրը) նամակ ստացայ, թէ Շուշիկը ամուսնացաւ, գծուցի, ինձ գցեցի Լայպցիգ՝ ընկերներիս մօտ մխիթարուելու...*»:

Վարպետն այն կարծիքին էր, որ կանայք կը տիրապետեն դիրաքեք էրիկներուն խաբելու արուեստին, ինքը թէւ չէր ուզեր, բայց խաբւեցաւ. «*Օ՛, խորամանկ, փորձող: Ա՛խ, չնաշխարհիկ Շուշանիկ, դու գերեցիր ինձ: Որքա՛ն դիրաքեք, շուտ խաբուող և ընկճուող եմ ես կուսական սրտի առաջ...*»:

Մէկ անգամ բնոկած սիրոյ կրակը, ամբողջ կեանքի ընթացքին ծուխ դարձած տիրեց Վարպետի սիրտը: Թէև 16-ամեայ Իսահակեանը գերուեցաւ ու ստրկացաւ Շուշանիկի սիրով, այդուհանդերձ հետագայ տարիներու փորձով հմտացած վարպետը իր սիրտի կուտակածը պարպեց «Աբու Լալա Մահարի»ի տողերուն մէջ:

«*Յաւիտենական յոռետես Պ. Աւետիք Իսահակեան՝ իր «Աբու Լալա Մահարի» բանաստեղծական գիրքով, իժէն ու կարիճէն շատ ստոր կը դասէ ընդհանուր մարդկութիւնը, և կնկան մասին կը գրէ. «Եւ կինն ինչ է որ... խորամանկ, խաբող, արիւնարբու սարդ, յաւիտենական նանիք, որ հացդ է սիրում, համբոյրի մէջ թոյն և քո գրկի մէջ ուրիշի ծախում»:* (Հ. Սիմէոն Երեմեան, «Ազգային դէմքեր, Գրագէտ հայեր, եօթներորդ շարք», Վենետիկ, Տպարան Ս.Ղազար, 1914, էջ 87):

Վարպետը կը նախընտրէ խաբիտու մակոյկով մը ծովուն յանձնել ինքզինքը, քան թէ հաւատալ կնոջ երդումին: Խիստ և անխնայ է Իսահակեանի քննադատութիւնը կնոջ հանդէպ, իր քննադատութիւններով ան կինը կը գամէ անարգանքի սիւնին:

*...Ատում եմ սէրը՝ մահի պէս անգութ,
Յաւիտեան այրող, խոցող գաղտնաբար,
Այդ քաղցր թոյնը, որով արբողը
Ստրուկ է դառնում և կամ բռնակալ...*

Անշուշտ կար ժամանակ, երբ Իսահակեան կը պաշտէր կինը, սակայն յետոյ ատեց այդ նուրբ, բայց իր խօսքերով՝ դաւաճան էակը: Կիներու վերաբերեալ անոր խօսքն աւելի ծայրայեղ ու ժխտող է, քան Շոպենհաուերինը կամ Նիցշէինը: Կնոջ առեղծուածի վերաբերեալ բազմաթիւ փիլիսոփաներ, բանաստեղծ-

ներ, քաղաքագէտներ տարբեր կարծիքներ արտայայտած են, մէկը կ'երկրպագէր, միւսը՝ ոչնչութիւն կը համարէր կինը: Իսահակեան որքան ալ անխնայ ըլլայ կնոջ մասին իր արտայայտութիւններուն մէջ, պէտք է նշել, որ այդ խօսքերը վիրաւոր սիրտէն ժայթքող, ցաւոտ ու խոցոտ ապրումներ են:

Դէպի անծայրածիր անապատը շտապող և Իսահակեանի բերանով խօսող Աբու Մահարին կը բացականչէ. «*Չկայ ստեղծագործական ոգի, մտքի կորույ, կամք... Չկայ ընկեր, չկայ մարդ, չկայ կին*»: Այնուհետեւ «*Ի՞նչ է ընկերը, յաւէտ բամբասող, միակ խուզարկու հետքիդ, քայլերիդ: Ծանօթ շները չեն հաչում վրադ, ծանօթ մարդիկ են հաչում քո վրայ*»:

Արաք բանաստեղծը օձերու և իժերու հետ ընկերանալն ու ապրիլը կը գերադասէ մարդկային ընկերակցութենէ: Սակայն գրաքննադատութիւնը համամիտ չէր ընկերութեան մասին Վարպետի կածիքի հետ: «*Հանրութեան օծուն գաղափարներուն՝ հակառակ մտածել, խօսիլ ու գրելը հիմա նորութիւն և տաղանդաւոր գիւտ կը համարուի. Պ. Իսահակեան այդ գիւտերուն մէջ կը չափազանցէ, անյաշտ կը մնանք իր այս գաղափարներուն հետ. «Վա՛յ նրան, ով որ տուն - տեղ ունի, կապուած է շան պէս իր տան շէմին»:* Ինչո՞ւ, վասն զի իր հայրենիքը միևնույնիւն ... և ընկերները հաչող շուն մը կը նկատէ: Կ'ուզէ ամենէն ազատիլ, հեռանալ հայրենի երկիրէն, ուր կայ շղթայ, կեղծիք ու պատրանք: Բայց իրաւացի է իր յոռետեսութեան ինչ - ինչ վայրկեաններուն մէջ: Ճշմարտութեան հետ հաշտ կը մնան իր սա տողերը. «Եւ ի՞նչ է փառքը.- Այսօր քեզ մարդիկ կը բարձրացնեն եղջիւրներից վեր, վաղը նոյն մարդիկ քեզ կը նետեն սմբակների տակ ճմլելու համար»: (Հ. Սիմէոն Երեմեան, անդ, էջ 89-91):

Թիրիմացութենէ հեռու մնալու համար պարզաբանենք, որ հայրենիք ըսելով Վարպետը նկատի ունէր հայրենիքին մէջ տիրող բռնութեան մթնոլորտը, անարդարութիւնը, կեղծիքը, իսկ Վարպետի անսահման հայրենասիրութիւնը երբեք չենք կրնար կասկածի տակ առնել, չէ՞ որ հենց հայրենիքէն դուրս ապրելու այդ տարիներուն Իսահակեան ուշադիր կը հետեւէր հայրենիքէն ներս կատարուող անցուղարձին, ամէն կերպ կը փորձէր օգտակար ըլլալ իր հայրենիքին: Յիշենք թէկու՞ Թալեաթի սպանութեան կազմակերպման գործին իր ունեցած մասնակցութիւնը: Աւետիք Իսահակ-

եան՝ պոէմներու և բալլադներու վարպետը, ժողովրդական երգերու երգիչը, երբեք անտարբեր չէ եղած ժողովուրդի ճակատագրին, իր բանաստեղծութիւններու էական նիւթերէն մէկը եղած է բողոքը հին աշխարհին դէմ, ուրիշի արիւն-քրտինքով շաղախուած կապիտալիստական հայրենիքի դէմ, բանաստեղծը միշտ ալ այրուած և տառապած է իր հարազատ ժողովուրդի դարդ ու ցաւով:

«Իսահակեան իր հիւանդ և ջրատ քնարերգու հոգեբանութեան մէջ, կազդուրելու քաջութիւն ալ ունի, իր տաղերով երեսկայութեանդ թռիչք կու տայ, ու դու հայրենիքիդ աղբիւրին, բարձր ծառերուն և աւերակներուն շուրջին տակ՝ կ'երագես ներքին կեանքիդ ջախջախուած պատկերները և կը սիրես ապրիլ տանջանքի կեանքը: Աշուղներուն մեծ մասը՝ ինքնաբոյս գրականութիւն մ'ունին, Իսահակեան հայ հողէն ու օտար գրքերէն ծծեր է իր բանաստեղծութեան ոգին: Հէքեաթը՝ իր մանկական խանձարուրով չի ներկայացներ, այլ անոր վրայ կը ձգէ գրական պերճագեղ պատմունքներ: Ասով է, որ ինքը ինծի համար արուեստագէտ աշուղ մըն է եւ հայրենաշունչ մշակուած գրագէտ քերթող»։ (Հ.Սիմէոն Երեմեան, անդ, էջ 90-91):

Եւ ո՞վ է հիւսել հեքիաթն այս վսեմ,
Հիւսել աստղերով, բիրտ հրաշքներով,
Եւ ո՞վ է պատմում բիրտ-բիրտ ձեւերով՝
Անդու ու անխոնջ՝ այսպէս թովչանքով:

Ազգեր են եկել, ազգեր գնացել,
Եւ չեն ըմբռնել իմաստը նըրա.
Բանաստեղծներն են հասկացել դոյզն ինչ
Եւ թոթովում են հնչիւններն անմահ:

Ոչ որ չի լսել սկիզբը նըրա,
Եւ չի լսելու վախճանը նըրա,
Ամէն հնչիւնը դարեր է ապրում,
Ամէն հնչիւնին վերջ, սկիզբ չկայ:
Բայց ամէն մի նոր ծնուածի համար
Նորից է պատմում հեքիաթն այս շքեղ,
Նորից սկսում և վերջանում է
Ամէն մի մարդու կեանքի հետ մէկտեղ:

Չնայած բազմազան կարծիքներուն, ոեւէ մէկը չի կրնար հերքել, որ պոէմը երբեք չէ կորսնցուցած իր արդիականութիւնը, ճիշդ հակառակը, ժամանակը աւելի է արժեքաւորած անոր բովանդակութիւնը: Պոէմի մէջ խօսուած

նիւթերը միշտ ալ մտահոգած են մարդկութեանը. ո՞վ գոնէ մէկ անգամ չէ հիասթափւած կնոջմէ կամ ընկերոջմէ, որո՞ւն կեանքին մէջ չէ եղած դաւաճանութիւն, անհաւատարմութիւն, բաժանում, ո՞վ իր կեանքին մէջ գոնէ մէկ անգամ չէ ճաշակած ընդհանուրի մէջ միմակութեան լեղի զգացումը: Եւ այդ վայրկեանին յուսալքուած ու վշտացած, ուզած է հեռանալ ու մենամալ ամէնքէն ու ամէն ինչէ: Ատիկա բնաւ փախուստ չէ, բնաւ նահանջ կամ յանձնուիլ չէ, և երբեք՝ հայրենիքի դաւաճանութիւն կամ ուրացում:

Տարբեր էին նաեւ պոէմի նիւթի և հերոսի ընտրութեան մասին կարծիքները, ինչպէս նաեւ թէ ի՞նչ նմանութիւններ կան Աւետիք Իսահակեանի և արաբ բանաստեղծ՝ Աբու-լ-Ալա-ալ-Մահարիի միջեւ: Վարպետը տարբեր առիթներով յստակօրէն տուած է այդ հարցումին պատասխանը. «Ընտրեցի նրան իմ յոյզերս մարմնացնող», այսինքն՝ որպէս իր նուիրական հերոս՝ Մահարրաթ քաղաքում 973թ. ծնած արաբ բանաստեղծ Աբու-լ-Ալա ալ-Մահարիին»։ (Աիկ Իսահակեան, «Բարեւ, Վարպետ», Երեւան 2008, էջ 112):

Արաբ բանաստեղծը Վարպետին հոգիին գաւակն է: Գերմանիոյ մէջ Իսահակեան արաբ բանաստեղծի գրութիւններու պզտիկ գրքոյկ մը կ'ուսումնասիրէ: Կը կարդար Վարպետը և կը զգար, թէ ինչպէս երկու հանճարներու հոգիները կը սկսին հաղորդակցուիլ իրարու հետ: Իսահակեանի կարծիքով ինքը և արաբ բանաստեղծը շատ ընդհանուր գիծեր ունէին: Վարպետը ոչ մէկ ընդօրինակութիւն ըրած է արաբ բանաստեղծէն: Իբրեւ պոէմի վերնագիր Իսահակեան ընտրած է հերոսի անունը՝ Աբու-Լալա Մահարի: Վերնագիրէն յետոյ գրուած է «Քասիդ»՝ պոէմ: Վերնագիրէն ետքը Վարպետը արաբերէն նշանակությամբ դրած է Քասիդ (պոէմ), ընդգծելու համար ստեղծագործութեան արևելյան ժանրը: Պոէմի կառուցումաւքը նույնպէս արեւելեան է, երկար տողերը բաժնուած են սուրահներու: Այս բառի հայերէն թարգմանութիւնը նույնպէս կը նշանակէ հատուած, մաս, գլուխ: Իսահակեան, որպէս բանաստեղծական հնարք, պոէմը գլուխներու բաժնելու համար ընտրած է մաս կամ հատուած բառին հոմանիշ՝ սուրահ բառը: Չէ՞ որ Ղուրանը նույնպէս բաժնուած է սուրահներու: Ասիկա անգամ մըն ալ ցոյց կու տայ պոէմի կապուածութիւնը արեւելքի հետ: «Աբու Լալա Մահարի» պոէմը բաժնուած է 7 սուրահ-

ներու, պոէմը կը սկսի անվերնագիր նախերգանքով.

Աբու-Լալա Մահարին,

Հռչակաւոր բանաստեղծը Բաղդադի...:

Արդէն խօսուեցաւ, որ այս պոէմի մասին տարբեր կարծիքներ և գուգահեռներ եղան. ոմանք ըսին, որ Վարպետի լեզուն և ոճը նման են Նիցշէին և Շոփէնհաուերին: Այս փաստը պատահականութիւն չէ, յիշենք, որ Եվրոպա ուսանելու տարիներուն երիտասարդ Իսահակեանը տարուած էր Շոփէնհաուերի, իսկ յետոյ Նիցշէի փիլիսոփայական գաղափարներով, ուստի զարմանալի չէ անոնցմէ ազդուելու փաստը: Շուտով այդ երկու անուններուն կ'աւելնայ նաեւ հնդկ մեծ յոռետես, կրօնաբարոյագէտ՝ Բուդդայի անունը: Իսահակեանի «Աբու-Լալա Մահարի» և Նիցշէի «Այսպէս էր խօսում Չարադուստրան» պոէմներու նմանութիւնները. Չարադուստրա և Աբու Ալա, երկուքն ալ Արեւելքէն, մէկը Պարսկաստանէն, միւսը՝ Արաբիայէն: Երկուքն ալ ըմբոստ, երկուքն ալ խոշոր դէմքեր, երկուքն ալ խորունկ հոգի ունէին, ինչպէս նաեւ արժէքներ ստեղծող անհատներ էին: Իսահակեան անշուշտ ազդուած է ուրիշ հեղինակներէ ալ, սակայն կուրօրէն չէ ընդօրինակած այս կամ այն հեղինակը: Գուցէ ընդհանուր սիւժետային նմանութիւններ կան Աբու-Լալա Մահարիի եւ Նիցշէի Չրադաշտի միջեւ, սակայն պէտք է նկատել, որ «Աբու Լալա Մահարի» պոէմով Վարպետը լիարժէք ինքնուրոյն խօսք ըսած է: Կեանքի դժուարութիւններու միջով անցած և փորձառութիւն ձեռք բերած երեսնամեայ արաբ բանաստեղծն ալ կ'ուզէ փախչիլ ներկայ հասարակութենէ, մարդոցմէ, ընկերներէ, կիներէ, և հանգրուանիլ անապատին մէջ՝ գազաններու մօտ, որովհետեւ այնտեղ զով է, անուշ, անդորր, քան թէ մարդոց մէջ: Իսահակեան իրեն յատուկ տաղանդով պատկերած է ներկային մէջ ապրող մարդու հոգեկան զգացումները. «Մարդկանց մօտ պէտք է աշալուրջ լինես, միշտ ոտքի վրայ և սուրը ձեռքիդ, որ քեզ չլկեն, քեզ չյօշոտեն՝ թէ՛ բարեկամդ և թէ՛ թշնամիդ»: Որպէս ըսուածի շարունակութիւն յիշենք իր ցանկալի ազատութիւնն արդէն ճաշակած Աբու Ալա Մահարիի խօսքերը. «Օ՛, ինչ ազատ եմ, անսահման ազատ: Ո՛չ մի մարդկային ձեռք ինձ չի հասնի, ո՛չ մի մարդկային աչք ինձ չի տեսնի ...»: Այստեղ Իսահակեանի ներաշ-

խարհն արդէն փոխուած կը նկատենք, անիկա այլեւս լուռ ուղտ չէ, այլ՝ հպարտ վագր:

Կարծիքներ եղան, իբր Իսահակեան փախեր է կեանքի բարդ խնդիրներէն, այնտեղ ուր հարկաւոր էր կռուիլ, փախեր է: Սակայն այս կարծիքը սխալ է: Իսահակեանն ու բոլոր ժամանակներու հանճարներն իրենց տաղանդի շնորհիւ վայելած են հասարակութեան սէրն ու յարգանքը: Գրեթէ բոլոր հանճարներն ալ ճաշակած են դաւաճանութիւն, խաբէութիւն և դաւադրութիւն, այդ բոլորէն յոգնած ու հիասթափուած, չգնահատուած ըլլալու գիտակցումով, անոնցմէ շատեր լուռ հեռացեր են: Սակայն ատիկա բնաւ ալ փախուստ չէ: Անոնք թէեւ որոշ շրջան մը առանձնացած են, սակայն անոնց տաղանդը երբեք չէ լռած կամ երկնչած իրաւական և ընկերային անհաւասարութեան առջեւ, ժողովրդի դարդ ու ցաւի մասին խրոխտ երգերով անոնք անմահացած են: Աստուածային տաղանդ, կամք, աշխատասիրութիւն, անկոտրում ոգի, աշխարհն ու մարդիկը լաւ հասկնալու բացառիկ տաղանդ, ասոնք են անոնց հանճարի գաղտնիքները: Իսահակեան և բոլոր անոնք, որոնք ընդվզած են իրենց ժամանակի դէմ, քաջ գիտակցած են, որ բոլոր դժուարութիւններն ու ծանր ժամանակները անցողիկ են, երբեք չեն ըսած, որ հայրենիքը լաւ չէ, ընդհակառակը, ճիշդ այդ հայրենիքի համար են պայքարած և անմահացած՝ հայրենիքին ու ժողովուրդին ծառայեցնելով իրենց գրիչը:

Իսահակեանն ալ իր հերոսի նման ունէր բնածին տաղանդ, մտաւոր լաւ կարողութիւններ, խորաթափանց հոգի, լաւ կրթութիւն: Այդ նոյն, իր կողմէ քարկոծուող հայրենքին մէջ էր ան ձեռք բերած այդ բոլորը, երախտապարտ էր, իր ամբողջ կեանքի ընթացքին ան իր գործով այդ ապացուցեց: Սակայն ժամանակի ընթացքին կեանքը շատ էր փոխուած: Վարպետը չէր կրնար յարմարիլ այդ շեղուած բարքերուն, անոր բանաստեղծական հոգին խռոված էր, վշտացած, այդ էր պատճառը որ Իսահակեան ժամանակաւորապէս հեռացաւ, որպէսզի օր մը նորէն վերադառնայ: Հայրենիքէն հեռու, օտարութեան մէջ ըլլալով, Վարպետի գրիչը երբեք չլռեց: «Աւետիք Իսահակեան, արդէն տարիներ ի վեր առանձնացած իր ընտանիքի հետ Վենետիկ, քաղաքական ու հրապարակագրական ամէն գործունէութենէ քաշուած, ինքզինք զուտ գրական գործունէութեան մը տուած էր, մեր ազգային բանաստեղծութիւնը նորանոր


գոհարներով ճոխացնելով: Եւ արդէն ինքը միշտ եղած էր մինն այն կուսակցականներէն, որ ազգային զգացումը, ազգային շահը կուսակցական զգացումէն, կուսակցական շահէն վեր կը դնեն. Իսահակեան միշտ եղած է հարազատ ազգասէր Հայ մը, գեղեցկութեան պաշտամունքին հոգիին նուիրուած մաքուր բանաստեղծ մը»։ (Ա. Չոպանեան, «Աւետիք Իսահակեան, Փարիզից հայրենիք վերադառնալու կապակցութեամբ: «Ապագայ», Փարիզ, 1926, 27 Մարտի):

*Կեանքը երազ է, աշխարհը՝ հեքիաթ,
Ազգեր, սերունդներ - անցնող քարաւան,
Որ հեքիաթի մէջ, վառ երազի հետ,
Չուն է անտես դէպի գերեզման:*

Յարական բանտէն դրամական երաշխաւորութեամբ ազատ արձակուելէն լետոյ ցարական «արդարադատութիւնէն» խուսափելու նպատակով Իսահակեանը կը մեկնի Եվրոպա: Վարպետի գրառումներէն ու նամակներէն յայտնի կ'ըլլայ, որ հայրենիքէն հեռու օտարութեան մէջ անիկա երանելի կամ նիւթական ապահով վիճակով չէ ապրած: Գրական աշխատանքով իր վաստկածը շատ քիչ էր, անիկա կ'ապրէր համեստ կեանքով, ապաւինելով եղբայրներու, հայ գրականութեան մեկենասներու օգնութեան: Կիսաւեր հայրենիքէն օգնութիւն ակնկալելը անիմաստ էր: Նիւթական ծանր պայմանները կը ստիպեն Վարպետին տեղափոխուիլ Զուիցերիայէն Իտալիա՝ Վենետիկ: Այստեղ ալ կ'ապրէր համեստ կեանքով՝ 1923-էն սկսեալ «Հայրենիք»ին աշխատակցութեան աշխատավարձով:

Հանապազօրեայ հացի մապին մտածելը շատ կը մտահոգէր Վարպետը: Գրականութենէն զատ ուրիշ ոչինչով կը զբաղէր ան, հոգեպէս ճնշուած, տեսական ժամանակ չի կրնար ո՛չ ստեղծագործել, ո՛չ գիրք կարդալ. միայն կը մտածէր թէ ինչպէս լուծէ օտարութեան մէջ գոյութիւնը պահպանելու խնդիրը: Ժամանակը չէր սպասեր, և այդ ընթացքին բազում դժուարութիւններ և գրկանքներ յաղթահարելէն ետքը Վարպետը կը հանգի այն գաղափարին, որ լաւագոյն ելքը հայրենիք վերադառնալն է, ուր գոնէ գլուխին տանիք մը կ'ունենայ, սեղանին՝ հաց, ի վերջոյ գերեզման մը՝ հայրենիքին մէջ հանգչելու համար:

«Լրացաւ 11 տարին այն օրից, երբ հեռացայ հայրենիքից, ուր թողի տուն ու երկիր,



Ա. Իսահակեան, Գէորգեան Ճեմարանի սան

ընտանիք ու շրջան՝ լիքը, կեանքոտ, ուրախ, շէն...,- գրում է Իսահակեանը,- և հիմա կիսով չափ դատարկուած, և ինքս էլ շուարած՝ թէ ինչ անեմ, երբ պիտի վերջ ունենայ քո ասած «կամաւոր արքորը» ...ամէն տարելիցին, ես 10-15 օր շատ մռայլ հոգեկան շրջան եմ ապրում, այս տարի աւելի քան երբեք, որովհետեւ տարիքս էլ առնում եմ, ու գնաց երիտասարդութիւնս, երբ եկայ՝ զգում էի ինձ թարմ ու աշխոյժ, իսկ հիմա յուզուած եմ եւ քայլում եմ դէպի 50 տարեկանի սարսափելի թիւր, ուզում եմ այդ ճակատագրական թուին չհասած հայրենիք լինեմ, քայլեմ պատանեկութեան և երիտասարդութեան անցկացրած վայրերը, բայց վախենում եմ գնալուց»:

Այս նամակը գրելու ատեն Վարպետը ֆիզիքապէս առողջ էր, 47 տարեկան էր, յայտնի չէ թէ ինչէ՞ն կը վախնար: Հաւանաբար կը կռահէր, որ նախկին հայրենիքը պիտի չտեսնէ, այլ՝ աւեր, սեւ իրականութիւն: Թէեւ բոլշեւիկները աշխարհասփիւռ գրողներուն ետ կը կանչէին հայրենիք, այնուամենայնիւ ան կը վախնար, որ նորէն կը սկսին հետապնդել ու ինքը հանգիստ կեանքով պիտի չկրնայ ապրիլ: Բոլշեւիկներն իրենց պայմանները կ'առաջադրէին հայրենիք վերադարձողներուն՝ դարձնելով անոնց իրենց գործակիցն ու գերին, իսկ անոնք, որոնք իրենց հետ չէին, իրենց դէմ էին:

Չնայած բոլոր իր վախերուն, Վարպետը վերադարձաւ հայրենիք, և առանց իշխանական լրտես դառնալու, իր գրիչով շարունակեց ծառայել ժողովրդին ու մարդկութեան:

Աւետիք Իսահակեանի «Աբու Լալա Մահարի» պոէմի մասին տարբեր տարիներուն հնչած մեկնութիւնները շատ բազմազան են: Երբ պոէմը նոր ստեղծուեցաւ, անիկա նկատուեցաւ Իսահակեանի «անհատական ընդվզումի» արդիւնք, հին աշխարհը քանդելու ազատաբաղձ բանաստեղծի կոչ: Խորհրդային տարիներուն պոէմը դիտուեցաւ իբրեւ անարխիզմ քարոզող երկ: Յետոյ եկաւ շրջան մը, երբ նոյնիսկ դպրոցներէն ներս սկսան պոէմին դէմ քարոզչութիւն տարածել:

«Յունուարի 30-ին 82-րդ իննամեայ դպրոցի բարձր խմբերի աշակերտութիւնը կազմակերպեց գրական դատ՝ նուիրուած բանաստեղծ Աւետիք Իսահակեանի «Աբու Լալա Մահարի» պոէմին: Դատը տեւեց երեք ժամ և մեծ հետաքրքրութիւն ու եռանդ մտցրեց աշակերտութեան մէջ, լսելով պաշտպանի և դատախազի ճառերը և ժողովականների կարծիքները, դատարանը հանեց հետեւեալ որոշումը: «Աբու Լալա Մահարի» պոէմը թել գրուած է գեղեցիկ լեզուով, ճոխ է հարուստ պատկերներով ու նկարագրութիւններով, բայց պոէմի մէջ արտայայտուած բանաստեղծի մտքերը չեն համապատասխաներ ժամանակի ոգուն և ընդունելի չեն ո՛չ աշխատատեղիէն և ո՛չ էլ աշակերտութեան համար: Բանաստեղծը եթէ նկատում է իր շուրջը օրէնքի բացակայութիւնը, տանջանքը, հալածանքը, անարդարութիւնը և շահագործումը, ոչ թէ պիտի փախչէր անապատ, այլ պիտի մնար ու կռուէր բոլոր անարդարութիւնների դէմ, աշխատաւոր դասակարգը ազատագրելու և արդարութիւն հաստատելու համար: «Աբու-Լալա Մահարին վախկոտ, թուլամորթ, երազող, զառանցող տիպ է և այդպիսի տիպերը աշակերտութեան համար ընդունելի չեն»: 82-րդ դպրոցի աշակերտուհի, Ջուվարեան: «Գրական դատ»: Նուիրուած «Աբու-Լալա Մահարի» պոէմին: «Մարտակոչ», Թիֆլիս, 1924, 5 Փետրուար:

...Մարդկային լեզու, դու որ երկնային
Բոյրով ու թոյրով, շղարշով պայծառ
Ծածկում ես մարդու դժոխքը հոգու,
Ոգե՞լ ես արդեօք ճշմարիտ մի բառ...

Վարպետի այս հիասքանչ գործին մասին վերը ըսուածի պէս կարծիքներ չկան այսօր: Մեր օրերուն աշակերտները սիրով կը կարդան ու կը սորվին և՛ «Աբու-Լալա Մահարի»ն, և՛ Իսահակեանի միւս ստեղծագործութիւնները:

Քանի որ անոնք գրուած են սերունդները դաստիարակելու, բարին, գեղեցիկը, մարդկայինը անոց սիրտերուն մէջ սերմանելու համար, այլ ոչ թէ վախկոտութիւն կամ թուլամորթութիւն, ինչպէս ըսուած էր բոլշեւիկեան քարոզչական մեքենայի կողմէ: Շատերը չէ որ կը յաջողին գրել այնպիսի ստեղծագործութիւն, որ երբեք չկորսնցնէ իր այժմեականութիւնն ու գորեղութիւնը, միշտ արդիական ըլլայ, երբեք չհիննայ, Իսահակեանի տաղանդաւոր վրձինի շնորհիւ, այս պոէմը զարդարուած է ոչ միայն գունագեղ արեւելքի կախարդիչ գոյներով, շունչով, այլեւ համամարդկային և խոհա-փիլիսոփայական յատկանիշներով: Վարպետի այս հանճարեղ պոէմը յաւերժ դաջուած է համաշխարհային գրականութեան յիշողութեան մէջ: Բազմաթիւ թարգմանութիւններու շնորհիւ հանճարեղ բանաստեղծը կրցած է օտար ընթերցողներուն փոխանցել իր զգացումները, յուզումները. յաջողած է յուզել և միփարել իր պէս յուսահատուած այլազգի շատ սիրտեր:

«Նրա պոեզիան մի քանի տասնամեակներու ընթացքում օգնել է ինձ ապրել: Ես համոզուած եմ, որ նա կ'ապրի դարեր ու դարեր: Ես յիշում եմ իմ հանդիպումը Մոսկուայում Աւետիք Իսահակեանի հետ: Նա մագաղաթի նման բազմաթիւ կնճիռներով պատած դէմք ուներ, փիլիսոփայի և գուսանի դէմք: Ալեքսանդր Բլոկը գրել է. <<Իսահակեանը առաջնակարգ բանաստեղծ է, թերևս այժմ այդպիսի պայծառ ու անմիջական տաղանդ չկայ ողջ Եվրոպայում>>... Իսահակեանի բախտը բերեց, նրան թարգմանեցին թարգմանութեան ստանդարտիզացիայից շատ առաջ, թարգմանեցին Բլոկը, Բրիւսովը, Պաստերնակը, Ախմատովան: Նրա բանաստեղծութիւնները միշտ չէ, որ պայծառ են եղել: Նա մահացաւ ութսուներկու տարեկան, որի կէսից աւելին ապրել է հայրենիքից հեռու, <<Աբու Լալա Մահարի>> պոէմում նա գրել է.

Քայլի՛ր, քարաւա՛ն, ի՞նչ ենք թողել մենք, որ
կարօտանքով ցանկանք մեր դարձը,
Քայլի՛ր, կանգ մի՛ առ, թողել ենք միայն շոթայ
ու կապանք, կեղծիք ու պատրանք,
Եվ ի՞նչ է փառքը,- այսօր քեզ մարդիկ եղջիր-
ներից վեր կը բարձրացնեն,
Վաղը նոյն մարդիկ սմբակների տակ ճմլելու
համար վար կը նետեն...,

Ես Բաղդադի Սետոյի մասին պոէմը

վաղուց կարդացել եմ ֆրանսերէն թարգմանութեամբ, որտեղ հանգեր չկային, ուստի էպիտետները, եւ՝ բանաստեղծութեան ներքին ռիթմը աւելի հարազատ էին: Հետագայում ես յաճախ եմ յիշել Աբու-Լալա Մահարուն: Այդ պոէմը կարդալուց յետոյ, ո՞վ կ'ասի, թէ հայկական պոէզիան սահմանափակ բնոյթ ունի»: Իլյա Էրենբուրգ (Ա. Իսահակեանի մասին, Երեւան 1971թ., Ա. Իսահակեանի տուն-թանգարան, կազմեց եւ թարգմանեց Աբաս Իսահակեանը, էջ 25-26):

«...Ա. Իսահակեանն իր հոգու ամբողջ կառուցուածքով լիրիկ է: Սակայն 1909 թ. նա ստեղծեց <<Աբու-Լալա Մահարի>> հոյակապ ռոմանթիկական պոէմը: Պոէմի վրացական հրատարակութեան (թարգմանում Տիգրան Տարիճեի կողմից 1935թ.) առաջաբանում Աւետիք Իսահակեանն ասում է, որ իր պոէմի մէջ հետեւել է Բարաթաշվիլու <<Մերանի>>ի բանատողին ու որ երջանիկ է յայտարարելու, որ իր աւագ եղբայր Նիկոլայ Բարաթաշվիլին հանդիսացել է իր ոգեւորութեան աղբիւրը: Սակայն հայ բանաստեղծի զգացմունքների այդ ազնիւ արտայայտութիւնն ամենեւին էլ չպիտի հասկանալ այնպէս, թէ իբր <<Աբու-Լալա Մահարի>> գրուած է <<Մերանի>>ի ազդեցութեան տակ: Իսահակեանի պոէմը էպիկ կառուցուածքի երկ է, նրա պատկերներն ու կերպարները ծնունդ են միանգամայն այլ հասարակական հողից: Անշուշտ, կարելի է շփման կէտեր գտնել այդ երկու ստեղծագործութիւնների բանաստեղծական մտալոյացումների միջեւ: Սակայն դա ամենաընդհանուր կոնցեպցիան է և այս պոէմի մէջ մարմնաւորուել է զուտ հայկական հողի վրայ, հայկական արեւի կիզիչ ճառագայթների տակ և սնուցում կուտուրայի հիւքերով: Պոէմի մէջ փայլում և երփներանգում են այնպիսի վառ գոյներ, որոնք կարելի է միայն տեսնել Մարտիրոս Սարեանի կտաւների վրայ... <<Աբու-Լալա Մահարու>> վրացերէն հրատարակութեան առաջաբանում Աւետիք Իսահակեանը գրել է. << Ես երջանիկ եմ, որ տեսնում եմ իմ պոէմը մեծ Շոթա Ռուսթաւելու անմահ լեզուով>>: (Միմոն Զիովանի Ա. Իսահակեանի մասին, Երեւան 1971թ., Ա. Իսահակեանի տուն-թանգարան, կազմեց և թարգմանեց Աբաս Իսահակեանը, էջ 13-17):

Լսելով կողմ եւ դէմ կարծիքները, մէկ բան ակնյայտ է, Աւետիք Իսահակեանի <<Աբու-Լալա Մահարի>> պոէմը համաշխարհային գրականութեան բացառիկ նմուշներէն

է: Բաց նամակ մը աշխարհին և մարդկութեանը՝ հեղ մը դադար առնելու, խորհելու, ծանր ու թեթեւ ընելու և յետոյ շարունակութեան ընթացքը որոշելու համար: Ինչպէս Մ. Խորենացիի «Ողբը», Նարեկացիի «Մատեան ողբերգութիւն»ը, Ֆրիկի «Գ-անգատ»ը կամ ալ Սայեաթ-Նովայի տաղերը, «Աբու-Լալա Մահարի» պոէմն ալ երբեք պիտի չկորսնցնէ իր այժմեականութիւնը, մերօրեայ ըլլալը: Պիտի անդադար հնչէ մեր ականջներուն մէջ այնքան ատեն, քանի դեռ մարդ արարածը կը շարունակէ ապրիլ իր հին ու մաշուած պնակին մէջ, աղտոտուած դիմակով, քանի դեռ չէ որոշած դարձի գալ և ապրիլ նորովի:

Կոյր ու գուլ մարդիկ, առանց երազի,
Առանց լսելու հեքիաթն այս վսեմ,
Իրար կոկորդից պատառ էք հանում
Եւ դարձնում աշխարհն ահաւոր ջեհնեմ:

Ձեր օրէնքները - լուծ ու խարազան,
Եւ անելք մի ցանց խօլական սարդի,
Եւ որոնց ժահրով թունաւորում էք
Երգը բլբուլի, անուրջը վարդի:

Եղկելի՛ մարդիկ, փռչի կը դառնան
Ձեր վատ սրտերը, ձեր գործերը չար,
Եւ ժամանակի ձեռքը անտարբեր
Կը սրբէ-կ'աւլէ պիղծ հետքերը ձեր...

